Կարգապահական գործ թիվ ԿԳ-16205

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի փետրվարի 06-ի թիվ 35-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № ԿԳ/25-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Մարտուն Փանոսյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արայիկ Պապիկյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր № 970) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

Փաստաբան Արա Ղարագյոզյանը (**այսուհետ նաև Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**)՝ հայտնել է, որ 26.07.2016 թվականից ներգրավվել է «Սասնա Ծռեր» խմբի անդամների վերաբերյալ քրեական գործին՝ որպես պաշտպան: Դիմողը հայտնել է, որ 12.08.2016 թվականի առավոտյան ՀՀ ԱՆ «Դատապարտյալներ» հիվանդանոց ՔԿՀ-ում իր պաշտպանյալին հերթական անգամ տեսակցելու ժամանակ տեղեկացել է Հովհաննես Հարությունյանից, որ փաստաբան Արայիկ Պապիկյանը Դիմողի պաշտպանյալներին ասել է, որ իբր նա իշխանության կողմից ուղարկված փաստաբան է և իբր իշխանության կողմից է ֆինանսավորվում: Դիմողը նշել է նաև, որ Արայիկ Պապիկյանի կողմից նույն խոսքերն ասվել է նաև «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գտնվող «Սասնա Ծռեր» խմբի անդամ Արայիկ Խանդոյանին, որը դիմում է գրել Արա Ղարագյոզյանից հրաժարվելու մասին, սակայն իր հետ խոսելուց հետո, համոզվել է, որ դա իրականության չի համապատասխանում և դիմումը չի հանձնել համապատասխան մարմիններին: Փաստաբան Արա Ղարագյոզյանը գտել է, որ փաստաբան Արայիկ Պապիկյանը նման արարքով արատավորել է իր բարի համբավը և խնդրել է փաստաբան Արայիկ Պապիկյանին ենթարկել

կարգապահական պատասխանատվության:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 19.09.2016թ. թիվ 401-Ա/ԿԳ-16205 որոշմամբ փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր թիվ 970) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 5.1.1, 5.2.1(1) և 5.2.1(2) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

23.09.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ստեփան Ոսկանյանին:

<u>3.Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում դիմողը բացատրություններ չի տվել և կարգապահական գործի քննությանը՝ Պալատի խորհրդի նիստին չի ներկայացել :

10.01.2017թ-ին ՀՀ փաստաբանների պալատ է մուտքագրվել Արա Ղարագյոզյանի դիմումը, որի համաձայն նա խնդրել է իր վերը նշված դիմումին ընթացք չտալ, քանի որ չի ցանկանում, որ Ա.Պապիկյանը ենթարկվի կարգապահական պատասխանատվության և նրա դեմ բողոք չունի:

<u>3.2.Պատասխանողի բացատրությունները.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություններ չի տվել

Պատասխանողը Խորհրդի նիստում ըստ էության բացատրություն չի տվել և հրաժարվել է իր նկատմամբ հարուցված կարգապահական գործի վերաբերյալ որևէ դիրքորոշում հայտնել՝ նշելով, որ չի ցանկանում իր և իր պաշտպանյալի միջև տեղի ունեցած գաղտնի խոսակցությունը հրապարակել:

<u>3.3. Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

<u>4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան՝ Ստեփան Ոսկանյան հավաքագրելով տվյալ գործին վերաբերող ապացույցները և

ուսումնասիրելով դրանք 23.11.2016թ.կազմել է եզրակացություն: Ներկայացված եզրակացության վերաբերյալ կողմերը որևէ դիրքորոշում չեն հայտնել:
24.11.2016թ-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:
Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի փետրվարի 06-ին, ժամը՝ 18.30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը՝

26.07.2016թ-ից որպես պաշտպան ներգրավված լինելով թիվ 58212116 քրեական գործով, Դիմողն իրականացրել է նշված գործով մեղադրյալներ Հովհաննես Հարությունյանի և Արայիկ Խանդոյանի շահերի պաշտպանությունը:
Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով և Պատասխանողի բացատրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պատասխանող Արայիկ Պապիկյանը փաստաբանի թիվ 970 արտոնագիրը ստացել է 24.10.2009թ.-ին: 2009-2016թթ. ընկած ժամանակահատվածում, նրա նկատմամբ սույն կարգապահական վարույթից բացի հարուցվել է 1 կարգապահական վարույթ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի **5.1.1** ենթակետի համաձայն՝ ***Մասնագիտության ընդհանուր բնութագիրը պահանջում է փաստաբանների միջև վստահություն և համագործակցություն***, *ինչը ելնում է վստահորդի շահերից, և* ***այն նպատակ է հետապնդում, որ փաստաբանները խուսափեն ավելորդ դատավեճերից և այլ վնասաբեր գործողություններից, որոնք կարող են վատ անդրադառնալ մասնագիտության հեղինակության վրա****: Այս կանոնը չի կարող մեկնաբանվել,*

որպես մասնագիտության շահերը ընդդեմ վստահորդի շահերի դասելուն ուղղված կոչ:

Կանոնագրքի **5.2.1 (1)** ենթակետի համաձայն՝ ***Փաստաբանը չպետք է՝ (1) թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:***

Կանոնագրքի **5.2.1 (2)** ենթակետի համաձայն՝ ***Փաստաբանը չպետք է՝ (2) վստահորդին դրդի այլ փաստաբանի հետ ունեցած իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրից հրաժարվել:***

Պատասխանողի կողմից Կանոնագրքի նշված կանոնների խախտում արձանագրելու համար անհրաժեշտ է պարզել՝

արդյո՞ք փաստաբան Արայիկ Պապիկյանը Դիմողի վստահորդի մոտ Դիմողի նկատմամբ կատարել է Դիմողի արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող արտահայտություններ.

արդյո՞ք փաստաբան Արայիկ Պապիկյանը Դիմողի վստահորդի մոտ Դիմողի նկատմամբ կատարված արտահայտություններով դրդել է նրան հրաժարվել Դիմողի իրավական օգնությունից:

Պատասխանողի կողմից վերոնշյալ կանոնների խախտում թույլ տալու փաստը վկայակոչել և ներկայացրել է Դիմողը: Համաձայն Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 15-րդ հոդվածի 1-ին մասի, առ այն, որ «Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը», ապացուցելու պարտականությունը կրում է փաստը վկայակոչած Դիմողը: Եվ համաձայն «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 15-րդ հոդվածի 5-րդ մասի ՝ «Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը», տվյալ դեպքում Դիմողը:

Սույն կարգապահական գործի քննության ընթացքում Խորհրդին չի ներկայացվել այնպիսի ապացույց, որով հաստատված կհամարվեր փաստաբան Արայիկ Պապիկյանի կողմից Կանոնագրքի 5.1.1, 5.2.1(1) և 5.2.1(2) ենթակետերի խախտում թույլ տալու փաստը: Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողն իր 10.01.2017թ. ներկայացրած դիմումով խնդրել է իր վերը նշված դիմումին ընթացք չտալ, քանի որ չի ցանկանում, որ Ա.Պապիկյանն ենթարկվի կարգապահական պատասխանատվության և նրա դեմ բողոք չունի:

Վերոնշվածը հաշվի առնելով, Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահակա վարույթն ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի

նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արայիկ Պապիկյանի (արտոնագիր թիվ 970) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.1.1, 5.2.1 (1) և 5.2.1 (2) ենթակետերի պահանջների խախտման հիմքով հարուցված թիվ ԿԳ-16205 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյան